

**ԱԶԳԱՅԻՆ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԴԱՐՁՎԱԾՆԵՐՈՒՄ**

Ն. Հ. ՕՀԱՆՅԱՆ

Թումանյանի դարձվածները կարևոր դեր են կատարում ազգային մտածողության, բնավորության ու հոգեբանության դրսևորման մեջ և հետաքրքրություն են ներկայացնում նաև այդ տեսակետից¹։ Թումանյանը վարպետորեն տվել է ազգային միջավայրի բոլոր դույները, ներկայացրել աղբյուր՝ իր հիմնական առանձնահատկություններով ու գծերով։ Դարձվածների գործածությունը եղել է այն լեզվական-արտահայտչական միջոցներից մեկը, որն ընտրել է Թումանյանը՝ ստեղծելու ազգային բնավորություն ու հոգեբանություն, ազգային միջավայր ու կոլորիտ։

Ազգային բնավորության ու հոգեբանության հետ սերտորեն առնչվում են ազգի նիստուկացը, սովորույթները, աղաթները և այլն, որոնք ձեռք են բերվել դարերի ընթացքում, պահվել ու պահպանվել են ժողովրդի կողմից՝ անընդհատ մշակվելով, հղկվելով ու բյուրեղանալով՝ դառնալով ինքնատիպ ու խոր ազգային։ Ազգային բնավորության ու հոգեբանության կրողներ են Անուշը, Սարոն, Մոսիս, Սասունցի Դավիթը, Ջենով Օհանը, Մարոն, Նրա հայրը և ուրիշներ։ Այն դարձվածները, որոնցով բնութագրվում են այս կերպարները, ազգային բնավորության ու հոգեբանության ցայտուն արտահայտություն են, ինքնատիպ դրսևորումներ։ Բոլոր դեպքերում ազգային բնավորությունն ու հոգեբանությունը ձևավորվում են ժողովրդի սոցիալական, քաղաքական ու տնտեսական կյանքի հիմքի վրա։

Թումանյանի պոեմներում լավագույն ձևով դրսևորված են ազգային մտածողությունն ու հոգեբանությունը։ Երբեմն միայն մեկ դարձվածք բավական է ազգային այս կամ այն հատկանիշը ներկայացնելու, դրսևորելու համար։ Այն թերևս անփոխարինելի միջոց է Թումանյանի համար թե՛ ազգային միջավայրի գույներն ու երանգները տալու, թե՛ ազգային կոլորիտ, բնավորություն ու հոգեբանություն ստեղծելու համար։ «Անուշ»-ը ազգային բնավորությունն ու հոգեբանությունը, ազգային նիստուկացը, աղաթներն ու սովորույթները ներկայացնող մի գեղեցիկ երկ է՝ ժողովրդական դարձվածների առատությամբ և նրանց հմուտ ու տեղին գործածությամբ։ Դարձվածները մի դեպքում կիրառվում են ազգային բնավորությամբ ու հոգեբանությամբ շնչող կերպարները բնութագրելու, մի այլ դեպքում ծանոթացնում են ընթերցողին ազգային սովորույթների, ծեսերի ու նիստուկացի հետ, իսկ երբեմն էլ նպաստում են ազգային կոլորիտի սաեղծմանը։ Անուշը հայ կնոջ ազգային նկարագիր է՝ իր բրնավորությամբ, աշխարհընկալմամբ ու զգացմունքներով, բնության գեղեցկությամբ շնչող ու դրանով սնվող փխրուն մի էակ։

¹ Ազգային մտածողություն ու հոգեբանություն դրսևորող դարձվածները ուսումնասիրվում են Թումանյանի ստեղծագործություններից մի քանիսի հիման վրա։

Օխտն աղբյուրից ջուր է առել
Կույս սափորով, լուռ ու մունջ²:

Այս երկտողը հայ կնոջ պատկերը ներկայացնող մի սքանչելի քանդակ է, ուր լուռ ու մունջ դարձվածով ընդգծվում է Անուշի հանգիստ, հանդարտ ու խա-
լաղ բնավորությունը:

Շատ ազգային է Անուշը՝ նաև իր սիրո աշխարհով, իր զգացմունքների մեջ նուրբ, քնքուշ ու հեզ: Դարձվածների կիրառությամբ Թումանյանը հասել է այդ սիրո արտահայտման ազգային հնչեղության: Անուշի սերը ազգային շունչ ու ղունավորում է ստացել դարձվածների շնորհիվ: Հայ կինը ընդունակ է թե՛ մեծ սիրո, թե՛ այդ սիրո համար պահանջող զոհողության: Անուշը սիրո կա-
տարյալ մարմնացում է՝ զգացմունքի հայեցի գրսևորմամբ:

Աղջի, քո յարն եկավ, անցավ,
վառված, տառված քու սիրով (հ. 2, էջ 51):
Արի, ջան, արի,
Քու գալուն մեռնեմ (հ. 2, էջ 69):

Նշված դարձվածներով Թումանյանը ստեղծել է հայ կնոջ հոգեկան հա-
րուստ կերտվածքի, նրա մեծ սիրո գրսևորման սքանչելի նմուշներ: Սիրո կո-
րուստը մեծ, անսահման վիշտ է Անուշի համար, այդ իսկ պատճառով՝

Նրա շուրջը հեզ սիրուհին
Թեղացնում է ողբ ու լաց,
Ձեն է տալիս իր Սարոյին
Ու պտտվում մոլորված (հ. 2, էջ 71):

Ազգային հոգեբանությանը բնորոշ գծեր ունեն և՛ Անուշի, և՛ Սարոյի, և՛ Սոսիի զգացմունքներն ու ապրումները, որոնք անկրկնելի հմայքով գրսևորվել են դարձվածների գործածությամբ: Դարձվածների գործածությունը օգնել է գրողին ներկայացնելու ազգային հոգեբանությանը շնչող մի այլ հերոսի՝ Սա-
րոյին և տալ նրա նկարագիրը: Քնարական ու քնքուշ է Սարոյի սերը, և այս-
տեղ այն ունի ազգային շունչ ու ազգային գույներ:

Ես կը վառվեմ.
Հուր կը դառնամ.
Ես կը հալվեմ—
Ջուր կը դառնամ... (հ. 2, էջ 52):
Ու մնում եմ քեզ, մնում, անիրավ,
էնքան մնացի՝ աչքս ջուր դառավ (հ. 2, էջ 52):
Աման, էրեցիր սիրտս քո սիրով,
Ոտս կապեցիր թել-թել մագերով,
Ես չեմ դիմանալ, կփախցնեմ զոռով (հ. 2, էջ 50):

Թերևս միայն վերոհիշյալ դարձվածների գործածությամբ հեղինակը կը-
կարողանար տալ Սարոյի սիրո քնարական պատկերները՝ իրենց կախարդիչ

² Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1940, էջ 45: Այսուհետև Հ. Թումանյանի երկերից կհ. 1, Ե., 1950, հ. 3, Ե., 1949) արվող մեջբերումների հատորը և էջը կնշվեն բնա-
գրին կից:

գույններով: Դրանք պոեմում ստեղծում են սիրո զգացմունքը ազգային գույններով ներկայացնող քնքուշ պատկերներ, որոնք բուրում են ազգային շնչով ու թարմությամբ և անշափ հարուստ են ու գունեղ՝ իբրև ազգային բնավորության արտահայտություններ: Ազգային բնավորության փայլուն արտահայտություն է նաև Մոսիկ: Ուտնահարվել են նրա պատիվը, արժանապատվության զգացումը, որը փրկելու համար պատրաստ է անգամ ոճրագործության: Սա բուն ազգային նկարագիր է, որի դրսևորումը իրացվել է դարձվածների գործածությամբ:

Ամոթ քեզ, Մոսի... թուք ու նախատինք...

Մի անունդ հիշիր, մի բռնիդ մտիկ...

Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին... (Հ. 2, էջ 60);

Դե մեռիր էլի... գետինը մտիր...

Տղա չես լինիլ, եթե կուլ տվիր... (Հ. 2, էջ 61);

Մենակ Անուշի ախպերը-Մոսին

Մնաց հանգերում, երդում կերալ նա,

Ուր որ էլ լինին՝ նրանց միասին

Գտնի՝ կոտորի, սիրտը հովանա (Հ. 2, էջ 62);

Արյուն է կաթում սեականած սրտից.

Գնում է շտապ, քայլերը մոլոր (Հ. 2, էջ 60);

Թումանյանը օգտագործել է բազմաթիվ դարձվածներ՝ ազգային հոգեբանությանը բնորոշ մի շարք գծեր ներկայացնելու համար:

Միանգամայն ակնհայտ է, որ դարձվածների գործածությունը և դիպուկ ընտրությունը մեծ չափով օգնել են հեղինակին ազգային մի այսպիսի բնավորություն ստեղծելու և ներկայացնելու համար: Մոսիկ կերպարը ազգային հոգեբանության վառ և ցայտուն արտահայտություն է:

Ազգային հոգեբանության կրողներից է նաև Սարոյի մայրը: Նրա մեջ խոսում է հայ որդեսեր մայրը, որն անափ վիշտ է ապրում իր որդու մահվան կապակցությամբ: Որդուն կորցրած հայ կինը այսպես է սգում, այսպես է տանջվում, այսպես է տանում իր վիշտը: Այդ հոգեբանությանը ազգային գունավորում տալու համար Թումանյանը գործածել է օր ու արև, արևը հանգչել, գիշերը ընկնել, սիրտը կտրատել և այլ դարձվածներ:

— Ինչի՞ չես խոսում, ինչի՞ չես նայում,

Իմ օր ու արև, կյանք ու ջան որդի (Հ. 2, էջ 67);

Արևս հանգավ, Սարո ջան,

Գիշերս ընկավ, Սարո ջան... (Հ. 2, էջ 67);

Եվ ամեն մի խոսք, մի հիշողություն

Կտրատում էին սիրտը. ծեր նանի (Հ. 2, էջ 66);

Ազգային հոգեբանության արտահայտություն է նաև Անուշի հոր նկարագիրը: Հայկական հետամնաց աղաթներին գերի մի մարդ է նա՝ նահապետական մարդու իր խղճով հոգեբանությամբ, իր անդիշտ վերաբերմունքով Անուշի հանդեպ, որը համարձակվել է ոտնահարել հայրական տան պատիվը:

Տարած-ետ բերած աղչկան նա դիմում է կշտամբանքի ու պարսավանքի հետևյալ խոսքերով.

— Դուրս գնա, կորի, այ լիրբ, անզգամ,

Սև ու սուգ լինի թագ ու պսակդ (Հ. 2, էջ 64);

— Կորի, շերեաս աչքիս մյուս անգամ,
 ‘Իետիներ մտնի երկար հասակդ (հ. 2, էջ 64):

Վերահիշյալ դարձվածները միանգամայն հատուկ ու վառ կերպով ներկայացնում են ազգային հետամնաց ազաթներին դերի հոր հոգեբանությունը: Հայրը սրտի խորքում գուցե ներքեր աղջկան, սակայն գյուղական հասարակությունը և այնտեղ գործող օրենքներն ու ազաթները այդ թույլ չէին տա: Աղղալին միջավայրը ծնում է աղղային հոգեբանություն: Անուշի հայրն էլ ծընունդ է հայ նահապետական կյանքի ու միջավայրի և ապրում ու շնչում է այդ հոգեբանությամբ: Անուշին ուղղված նրա խոսքերը, թեև լրացնում են մեր լեզվի եղանակավորող դարձվածների մի փոքրիկ շարքը միայն, սակայն բավականին տարողունակ են ազգային հոգեբանություն ու բնավորություն դրսևորելու մեջ:

Դարձվածների գործածությամբ բավականին հարուստ և գունեղ ազգային կոլորիտ է ստեղծվել «Անուշ»-ի մի քանի դրվագներում ևս՝ հատկապես Հարսանյաց իրիկվա, Համբարձման տոնի գիշերվա, Սարոյի թաղման և այլ տեսարաններում:

Ստորև բերվող դարձվածների կիրառությամբ պոեմում ստեղծվում է ազգային գունեղ մի կոլորիտ՝ իր անկրկնելի հմայքով, իր պարզությամբ, որի միջոցով էլ գծադրվում են ազգային ծեսերն ու սովորույթները:

Գյուղն էին իջել հովիվ պատանիք
 Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի (հ. 2, էջ 58):
 Զուռնաչին փչեց կոխի եղանակ,
 Ահեկ ու ջահել իրաբով անցան (հ. 2, էջ 58):
 Եվ հանկարծ կանգնում իրանց կոտրատում,
 Ոտներով արագ գետնին վեր հատում (հ. 2, էջ 310):

Համբարձման տոնի նկարագրությունը նույնպես հարուստ է դարձվածներով, որոնցով հնարավորություն է տրվում հստակ պատկերացում կազմել հայ գյուղի մարդկանց ավանդույթների ու սովորույթների, մտածողության ու հոգեբանության մասին.

Թնդում են երգեր, խնդում են սրտեր.
 Ու շուրջ բոլորած վիհակ են հանում.
 Ելնում է մեկին իր երազն ու սեր,
 Մյուսի մուրազը սրտումն է մնում (հ. 2, էջ 55):
 Այ թուխ մազավոր աղջիկ,
 Այ սարի սովոր աղջիկ,
 Զիգյարին գյուլա դիպչի
 Քեղ սիրի ով որ, աղջիկ» (հ. 2, էջ 55):

Ազգային տոներից մեկն է Համբարձման տոնը: Այդ տոնախմբության ժամանակ վիհակ են հանում՝ իմանալու, թե ինչպիսի բախտ է գուշակվում յուրաքանչյուրի համար: Խնդում են մարդկանց սրտերը, բայց երբեմն վիճակը դժբախտություն է գուշակում, և մարդու մուրազը սրտումն է մնում: Անուշին բաժին ընկած սև վիճակը անեծք է նրա համար՝ ջիգյարին գյուլա դիպչի, ով կսիրի նրան: Կոտրվում է Անուշի սիրտը այդ անգութ գուշակությունից, սա-

կալն ընկերուհիները հորդորում են նրան՝ իր խաղը խաղալ և շարունակել տոնախմբությունը:

Ազգային կոլորիտի յուրահատուկ արտահայտություն է Մարոյի թաղման տեսարանը: Այս տեսարանում ստեղծվել են Մարոյի մահվան, թաղման ծեսի ու սգո ազդեցիկ պատկերներ, որոնք անշափ հարազատ են հայ գյուղին ու մարդկանց:

Մարոյի մահը սգում են բոլորը: Այդ սուգը մեղ է ներկայացվում ազգային յուրահատուկ գծերով. լսելով Մարոյի մահվան լուրը՝ մարդիկ իրար եմ անցնում. լաց ու կոծ անում. ընկեր-տղերքը փոս են փորում ու ճողին տալիս հովվի դին, իսկ Մարոյի անտեր ոչխարը լեզու էր առել ու խաղ էր կանչում ձեն-ձենի տված:

Ակնհայտ է, որ ազգային այս ծեսի ամբողջական ու կատարյալ նկարագրման մեջ նշանակալից դեր ունի վերահիշյալ դարձվածների գործածությունը, որոնց շնորհիվ սգո տեսարանը ներկայացվում է ազգային նրբին ու խորիմաստ գույներով:

Ազգային բնավորության ու հոգեբանության յուրահատուկ արտահայտություն է «Մարո»-ն, որտեղ լավագույնս ներկայացված են ազգային սովորույթներն ու աղաթները, այդ աղաթներին գերի մարդկանց մտածողությունն ու հոգեբանությունը: Պոեմում անկրկնելի հմայքով են ներկայացվել մանկահասակ Մարոյի, նրա հոր, մոր և այլոց հոգեբանությունը: Ահա մի օրինակ, որը պատկերացում է տալիս հարսնախոսության եկած մարդկանց և այդ արարողության մասին: Ինը տարեկան Մարոյին նշանելու եկած հարսնախոսները օրհնանքի խոսքերով են դիմում տանտիրոջը.

Տաշտենդ լի հաց լինի.

Դուռենդ միշտ բաց լինի (հ. 2, էջ 4):

Բաժակ է բարձրացնում և պսակն օրհնում Մարոյի հայրը.

— Կամքդ լինի, տե՛ր աստված...

Նշանեցին Մարոյին,

Տըվին շոբան Կարոյին (հ. 2, էջ 4):

Եվ կամ՝

— Ջաղացիդ միշտ հերթ լինի,

Մեջդդ ամուր բերդ լինի (հ. 2, էջ 5):

Նշված օրհնանքի խոսքերը դարձվածային արժեք ունեն և մտնում են եղանակավորող դարձվածների շարքը՝ իբրև ազգային հոգեբանությունը ներկայացնող փայլուն նմուշներ: Ծղանակավորող դարձվածները, այդ թվում՝ օրհնանքներն ու անեծքները, ազգային բնավորությունն ու հոգեբանությունը ներկայացնելու տեսակետից ավելի ընդգրկուն են ու տարողունակ:

Հոր օրհնանքի խոսքերը շուտով փոխվում են անեծքի, երբ Մարոն թողնում է ամուսնու տունը և վերադառնում հայրական օջախ.

Ոտ չըղնես էլ տունըս,

Մըրոտեցիր անունս... (հ. 2, էջ 6):

Անդրդվելի է հայրը, որովհետև մրոտվել է նրա անունը: Մարոն՝ այդ ինը տարեկան աղջնակը, ստիպված հեռանում է հայրական տնից:

Ազգային հետամնաց աղաթների դաժան աղդեցությունն է իր վրա կրում Մարոն, որի պատճառով էլ նա կործանվում է:

Մնողները, որոնք ազգային հոգեբանության կրողներն են, այս անգամ սրտի անյուր կսկիծով սղում են իրենց աղջա մահը:

Աղի լալիս էր հայրը,

Կուրծքը կոծում էր մայրը (հ. 2, էջ 298):

Նշված բոլոր դարձվածները պոեմին հաղորդում են ժողովրդայնություն, ընդգծում ժողովրդի հոգեբանության ու բնավորության բնորոշ առանձնահատկությունները:

Ազգային բնավորության ու հոգեբանության որոշ գծեր դրսևորվել են նաև ժողովրդի քաղաքական և սոցիալական կյանքը պատկերող ստեղծագործություններում: «Թաղավոր՝ ու շարշին» երկում գրողը ներկայացրել է ժողովրդի ազատատենչ ոգին՝ ազգային բնավորության հիմնական կողմերից մեկը: Ժողովրդի այդ տրամադրությունները արտահայտվել են մի շարք դարձվածներով.

Աման, հողեմ գլուխը Շահի,

Աստված Շահից հեռու պահի (հ. 1, էջ 344):

— Անեծք Շահին, իրեն գահին,

Անիծում են երկինքն ի վեր (հ. 1, էջ 348):

Էն սև օրը, որ մենք տեսանք,

Քո թշնամին թող չտեսնի.

Ախ, երբ պիտի մին էլ տեսնենք՝

Մեր անեծքը երկինք հասնի... (հ. 1, էջ 345):

Նշված դարձվածներում արտահայտվել է ժողովրդի անտանելի վիճակը, ազատատենչ ոգին, ատելությունը բռնության ու շահագործման դեմ և ստրկական վիճակից դուրս գալու լուսավոր հավատը: Ժողովրդի ծանր վիճակի նկարագրությունն է տրվում նաև հոգոց ֆաշել, արյան ծովեր, տեղ ու դադար չունենալ, հակառակ դեմ սնել դարձվածների գործածությամբ: Դրանցով ստեղծվում են հայ կյանքի տպավորիչ, ազդեցիկ պատկերներ, որոնց կենտրոնում ցուցադրվում է հայ մարդը՝ իր հոգեբանությամբ ու ճակատագրով, իր մորմուռներով ու ցավերով: Գարնան գալով հայ պանդուխտը ձեռքն է առնում ցուպը և մեկնում օտար ափեր, նա խոր հոգոց է ֆաշում՝ հիշելով իր հայրենիքը, ու թեև նա շատ է տեսել արյան ծովեր ու հակառակ դեմ արել մեծ ջանքեր, բայց հիմա էլ տեղ ու դադար չունի և ցիրուցան է եղել աշխարհով մեկ:

Ազգային բնավորության յուրահատկությունները այլ տեսանկյունով են դրսևորվել «Հառաչանք» պոեմում: Երբ ծերունին սկսում է պատմել իրենց օր ու կյանքից, ցավ ու դարդից (հ. 2, էջ 37), բացահայտվում է հայ մարդու ինքնատիպ ներքնաշխարհը՝ ազգային հոգեբանության յուրահատուկ գծերով: Այդ հոգեբանությունը տիպականորեն դրսևորվել է վայր եկել է տալիս, ի՞նչ ես կորցրել-ընչի ման գալի, ամեն մեռնողի երանի տալ, լեզու չունենալ, մի կտոր չոր հաց, երեսը պահել դարձվածներով:

Ազգային հոգեբանության յուրահատուկ արտահայտություն են նաև այն դարձվածները, որոնցում դրսևորվում է աշխատավոր մարդու հոգեկան մտերմությունը հատկապես հողի և այն առարկաների նկատմամբ, որոնց միջոցով ապրուստի միջոց կարելի է հայթայթել:

Առը շուռ տուր, խոփիդ դուրբան.

Օրհնյալ է աստված, հորովել (հ. 1, էջ 13):

Քաշի, եզը. ուսիդ մատաղ,

Քաշի, քաշենք, վար անենք (հ. 1, էջ 13):

Ճիպտին արա, քըշի հոտաղ,

Մեր սև օրին ճար անենք (հ. 1, էջ 13):

Բանը մնաց, ջան, ախպեր ջան.

Ուտիդ արա, ուսիդ արա.

Կալը կալսենք, անձրև չըզա (հ. 1, էջ 239):

Նշված դարձվածներում առավել շափով առկա է ազգային բնավորության ու հոգեբանության դրսևորումը: Այս դարձվածներով ստեղծվում են ազգային լուրօրինակ մի նկարագիր, հայ մարդու բնավորության և հոգեբանության արտահայտման քնարական ու մտերմիկ պատկերներ, որոնցում հայ աշխատավորն է՝ իր զգայական աշխարհով ու վերաբերմունքով դեպի իրեն շրջապատող իրականությունը: Խոփիդ դուրբան, ուսիդ մատաղ, ճիպտին անել, ուսին անել, սև օրին ճար անել դարձվածներում ակնհայտ են ազգային հոգեբանության դրսևորման նրբահյուս երանգները: Ազգային հոգեբանությունը պատկերվում է նաև կրոնական ծեսեր ու ավանդույթներ, կրոնական հավատալիքներ ու նախապաշարումներ ներկայացնող դարձվածներում:

Դարձվածների մի ամբողջ շարք վերաբերում է կրոնական հավատալիքներին, ծեսերին, արարողություններին, որոնք ազգային բնավորության և հոգեբանության արտահայտման յուրահատուկ դրսևորումներ են:

Գիր ու կապ, պաս պանել, աղոթք անել, դիրք գրած լինել, աստված բանենքը աջողի, շարք խափանել, աստված բարին առաջնորդի, շար աչք, գարի գցել դարձվածները, ունենալով կրոնական բովանդակություն, ազգային բնավորության արտահայտման յուրահատուկ ձևեր ու միջոցներ են: Երբեմն այդ դարձվածների իմաստը ուղղակիորեն առնչվում է Աստծո անվան հետ, երբեմն էլ դրանք ներկայացնում են ավանդույթներ ու ծեսեր կամ հավատալիքներ ու նախապաշարումներ, որոնցով անշափ հարուստ էր հավատացյալ մարդու կյանքը: Հայ մարդը հավատացել է գիր ու կապի զորությանը, շար աչքի ուժին, մշտապես պահպանել է եկեղեցական այնպիսի ավանդույթ, ինչպիսին է պաս պանելը, աղոթք է արել ամբողջ կյանքում, որ թեև իր գիրն այդպես է գրած, բայց շատ է կամեցել, որ աստված շարք խափանի, բարին առաջնորդի, հավատացել է գուշակություններին, այգտեղից էլ գարի գցելը, որն ունի գարիով համայնություններ, գուշակություններ անելու իմաստ:

Ազգային մտածողության և հոգեբանության նկարագրությունը տրված է նաև «Գիրքոր» պատմվածքում, և դրա մեջ կարևոր դեր են կատարում դարձվածները: Պատմվածքի հենց սկզբում հանդիպում ենք դարձվածների գործածության բազմաթիվ օրինակներին, որոնց միջոցով հեղինակը ստեղծել է ժողովրդի հոգեբանությանը համահունչ պատկերներ: Այսպես՝

«Գյուղացի Համբոյի տունը կոխվ էր ընկել, Համբոն ուզում էր իր տասներկու տարեկան Գիրքորին տանի քաղաք, մի գործի տա, որ մարդ դառնա, աշխատանք անի (հ. 3, էջ 35):

«Տանեցիք ու հարևանները եկան մինչև գյուղի ծերը, Գիրքորի թշերը պաշեցին ու ճամփա դրին» (հ. 3, էջ 35):

Ըստ հայկական մտածողության, առևտրական միջավայրում Գիբորը մառդ պիտի դառնար: Բազազ Արտեմի այն կարծիքին է, որ եթե նրա «ձեռք հալալ է. մառդ կդառնա» (Հ. Յ, էջ 86):

Մի բանի դարձվածների գործածությամբ հեղինակը կարողացել է վեր հանել Համբուի, Գիբորի ու բազազ Արտեմի ինչ-ինչ մտածական ու հոգեբանական հատկանիշներ, որոնք անչափ հոգեհարադատ են և համահունչ հայկական մտածողությանն ու ոգուն: Ահա Համբուի՝ որդուն տրվող խրատները՝ արտահայտված դարձվածներով. «Վախտ ու անվախտ դես դեն չընկնես. ձեռքը րկած փողը բոռ ու փուչ շանես, հազար ու մի պակասություն ունենա» (Հ. Յ, էջ 37): Աղդային հոգեբանության դրսևորման տեսակետից խիստ տիպական է Համբուի նամակը Գիբորին: Այստեղ օգտագործված տեղեկերս շատ են և դարձվածը խիստ դիպուկ է ու տարողունակ: Այն թե՛ տեղեկություն է հաղորդում, թե՛ դիմում-խնդրանք է, թե՛ բողոք է, թե՛ սպասում...

Հայ առևտրականի տիպիկ մտածողությամբ ու նկարագրով է ներկայացվում բազազ Արտեմը, և դարձվածները ավելի են խտացնում նրա կերպարի բացասականությունը, անմարդկային վարմունքն ու արարքները: Այսպես՝ «Խոզի գլուխը դրին խալիչին, գլուխը ետ ցեխն ընկավ», — հալալ քեզ համար են ասել» (Հ. Յ, էջ 48):

Գիբորի հիվանդանալուց հետո «Բազազ Արտեմը ցավի մեջ էր ընկել. նա դես-դեն ընկավ, նրանց կողմերից մարդ գտավ, ապսպրեց, որ Համբոն գա...» (Հ. Յ, էջ 48):

Բերված օրինակները, կարծեք, մեկնաբանման կարիք չեն զգում: Նրանցում խտացված ու բյուրեղացված է այն, ինչը կոչվում է աղդային մտածողություն և հոգեբանություն:

Աղդային մտածողության բյուրեղային արտահայտություն է Սասունցի Դավիթը՝ նույնանուն պոեմում: Դարձվածների անչափ առատությունը այստեղ վկայում է նրանց՝ աղդային մտածողության արտահայտման լավագույն ձևի ու եղանակի մասին: Դավիթի կերպարում խտացված աղդային մտածողության ու հոգեբանության շատ ու շատ գծեր ներկայացվում են դարձվածների միջոցով: Ազատասիրություն ու ժողովրդասիրություն, համարձակություն ու քաջություն, թշնամուն շհնազանդվելու անկոտրում կամք — ահա հատկանիշներ, որոնք աղդային մտածողության բնութագրումներ են և արտահայտվել են Դավիթի խոսքում՝ դարձվածների մոշոցով.

Բայց թագավորն ո՞ւր է հիմի,

Որ սև կապեմ նրա օրին (Հ. Յ, էջ 126):

Մեռած եք կարծում գուր մեզ, թե՞ շրվաք,

Կուզեք մեր երկիր դրենք խաբշի տակ... (Հ. Յ, էջ 117):

էս որ տեսավ Մրսրա բանակ,

Ջուր կըտրվեց սմ ու վախից (Հ. Յ, էջ 131):

Սև կապել, խաբշի տակ դնել, ահ ու վախից ջուր կտրվել և նման դարձվածներում դրսևորվել է ազգի մտածական և զգացական վերաբերմունքը դեպի հայրենիքը և այն ստրկացնել ցանկացող, ստրկացման ձգտող թշնամին: Դրանք ներկայացնում են Դավիթին, իբրև աղդային մտածողության լավագույն հատկանիշներ կրողի: Որոշ դեպքերում դարձվածները արտահայտում են ժո-

դովրդի ներողամտությունն ու բարյացակամությունն իր հարազատ զավակի խենթ ու ծուռ լինելու հանդեպ՝ դրսևորված ծեր կնոջ՝ պառավի խոսքում:

Որ եկել ես, այ խենթ ու ծուռ.

Ինձնից կուգես էջ ու շամփուր (հ. 2, էջ 120):

—Վայ, խելառ Դավիթ, շաղգամի տեղակ

Դու կրբակ ուտես, ցավ ուտես, ասավ,

Քու աչքն աշխարհում մենակ ի՞նձ տեսավ (հ. 2, էջ 115):

—Վայ Դավիթ, ասավ, մահըս տանի քեզ.

Դու՛ւ պետք է էն հոր զավակը լինես (հ. 2, էջ 111):

Ինչպես տեսնում ենք, դարձվածները ազգային մտածողության ու հոգեբանության արտահայտման լեզվական լավագույն միջոցներ են, որոնցով հարուստ են Թումանյանի ստեղծագործությունները:

ПРОЯВЛЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ХАРАКТЕРА И ПСИХОЛОГИИ ВО ФРАЗЕОЛОГИЗМАХ ТУМАНЯНА

Н. А. ОГАНЯН

Резюме

Ов. Туманян обращался к фразеологизмам для воссоздания национального характера и психологии, национальной среды и колорита.

С характером и психологией нации тесно связаны быт, обычаи и т. д., которые формировались в течение веков, непрерывно перерабатывались, оттачивались и кристаллизировались, становясь самобытными и глубоко национальными. Фразеологизмы, использованные им для характеристики тех или иных образов, являются ярким выражением национального характера и психологии. Фразеологизмы в одних случаях употребляются для характеристики олицетворяющих национальный характер и психологию образов, в других—они знакомят читателя с национальными обычаями, ритуалами, бытом.